Արձանագրություն N 2-2
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/11 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ գլխավոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07.01.2026թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Անդամներ՝ Հ. Պապյան
Հ. Գինովյան
Ա. Քոչարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Գրիգորյան

1. Մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման մասին

(Մ. Աղայանց)

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 Դիմում-հայտարարությունով «Բիդեք» ՍՊԸ-ն հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/11 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին՝ մասնավորապես՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող եկամուտների գծով 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին:

1.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել իրավասու մարմիններին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Բիդեք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 136 182 251 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որը գերազանցում է հրավերով սահմանված 500 000 ՀՀ դրամը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ «եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող ...., ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում.»:

Հրավերի 8.14 կետի համաձայն՝ «եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող...., ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում.»:

Հիմք ընդունելով Կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ գնահատող հանձնաժողովը «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը որակում է որպես իրականությանը չհամապատասխանող, որը համարվում է գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում և այդ հիմքով մերժում վերջինիս հայտը:

Քանի որ վերոգրյալով պայմանավորված «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, վերջինիս կողմից հայտով ներկայացված մյուս փաստաթղթերը չեն ուսումնասիրվել անհրաժեշտության բացակայության հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Մ. Աղայանց)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և սույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Աղայանց

Անդամներ՝ ---------- Հ. Պապյան

---------- Հ. Գինովյան

---------- Ա. Քոչարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան